

## Ն Ե Ր Ք Ի Ն Տ Ե Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

Մտաւորականութեան նշանակութիւնը հասարակական զարգացման մէջ.  
—Եւրոպական ազատարար գրականութեան ազդեցութիւնը Ռուսաստանի  
ներքին կեանքի վրայ.—Ալէքսանդր Ա-րդի վերաբերմունքը զէպի ճորտերի  
ազատութեան խնդրի.—1861 թ. փետրուարի 19-ը.—Ազատ աշխատանք և  
գիւղացիական հողատիրութիւն.—Հողաբաժինների պարտադիր լետ գնումն.  
—Վալուածատիրական հողերի վրայ ապրող գիւղացիների դրութիւնը Ան-  
դրկովկասում.—Զրի աշխատանքից օգտուողներ.—Մանր տնտեսութիւնների  
դիմացկունութիւնը.—Սակաւահողութեան դէմ գործադրուող միջոցներ.—  
Տեղական ինքնավարութեան նշանակութիւնը երկրագործ ժողովրդի հա-  
մար.—Ճորտերի ազատութեան քառասնամեակի առիթով որոշումներ.—  
Մարմնական պատժի վերացման միջնորդութիւններ.—Ճորտերի ազատու-  
թիւնը իբրև հիմք վաթսուական թուականների վերանորոգութիւնների.—  
—Պաշտօնական հաղորդագրութիւններ ուսանողական խառնակութիւնների  
մասին:

Եթէ տնտեսական և աւանդա-բնազդական պայմանները  
մի տեսակ տարերային անգիտակցութեամբ որոշ ուղղութիւն  
են տալիս հասարակական զարգացման—դրան հակառակ՝ մարդ-  
կային մտաւորականութիւնը, լուսաւոր միտքը, այն գործօնն է,  
որ գիտակցական դեր է կատարում, ջանալով արդարութեան  
սկզբունք մտցնել հասարակական կարգերի մէջ: Այնտեղ, ուր  
չը կայ մտաւորական կեանք և անհատները մատնուած են լոկ  
տնտեսական և աւանդա-բնազդական պայմանների մրցման—  
մենք տեսնում ենք մի կենցաղ, ուր գոյութիւն չունին մարդ-  
կային արժանապատուութիւն և իրաւունք: Պարզելու համար  
մեր ասածը հեռու չը գնանք վայրենիների մօտ, այլ վերցնենք  
մեր հարևան Պարսկաստանը կամ Թիւրքիան: Այդ երկրներում  
ներգործում են միայն տնտեսական յարաբերութիւնները, կրօ-  
նական նախապաշարմունքները, անգիտակցական բնազդումնե-  
րն ու կրքերը և համարեա գոյութիւն չունի մտաւոր կեան-  
քով ապրող ինտելիգենտ դասակարգ, չը կան գաղափարական  
հոսանքներ, միտքը թմրած է և անշարժ, մի խօսքով՝ տիրում է  
կատարելապէս մտաւոր անշարժութիւն ու խաւար: Հասարակա-

կան կեանք գոյութիւն չունի այդ երկրներում, և ամեն մի անհատ ապրում է իր և իր ընտանիքի համար: Արեւելցու հասկացողութեամբ շատ բնական է համարւում, որ մէկը ծնուի ստրուկ, իսկ միւսը՝ բռնակալ, մէկը իրաւագուրկ ու սեփականագուրկ մի թշուառ կեանք վարէ, իսկ միւսը՝ զեղխութիւն և փարթամութիւն վայելելով հանդերձ՝ ունենայ և ոչ մի օրէնք չը ճանաչելու և աշխատող դասակարգը հարստահարելու արտօնութիւն: Այդպիսի երկիրները մի-մի ճահիճներ են, որոնց մէջ պարագլիտ տգրուկները ապրում են թշուառ զոհերի արիւնը ծծելով: Եւ չը կայ փրկութիւն այդ զոհերի համար, մինչև որ մտաւորականութիւնը չը թափանցի ուժգին մի հոսանքով այդ երկիրների մէջ...

Այդպիսի մի նեխուած ճահիճ էր և նախապետրոսեան Ռուսաստանը: Պետրոսը ոչնչացրեց այն չինական պատերը, որոնք բաժանում էին Ռուսաստանը արեւմուտքի մտաւոր ծովի ալեկոծութիւնից: Մի անգամ կապ հաստատելով Եւրոպայի լուսաւոր մտաւոր կեանքի հետ, այլ ևս ոչ մի կերպ չէր կարելի ոչնչացնել մարդկանց մտքերի առնչութիւնը: Վոլտերների և Բուսսօների գաղափարների առաջ անգոր էին սահմանադրւի մաքսային կարգերը: Իրանը ռուսաց զահակալներն անգամ ենթարկւում էին եւրոպական լուսաւոր հոսանքների «վարակման», և Եկատերինա II-րդը, ինչպէս և նրա յաջորդները, նոյն իսկ աւելի լայն ու մարդասէր հայեացքներ էին արտայայտում, քան իրանց չըջապատող ազնուականութիւնը:

Ֆրանսիայից մուտք գործած ազատ գաղափարների համաձայն՝ ազատութիւնը և հաւասարութիւնը մարդկային բնութեան անկողողպտելի իրաւունքն են: Ո՞վ ոյժ ունէր արգելել, որ ժողովրդի մէջ տարածուեն մամուլի և խօսքի միջոցով այդ գաղափարները: Մտաւոր գործօնը արգէն իր դերը կատարել էր, զարկ տալով ինքնաճանաչութեան, և ճորտերը այլ ևս նախկին համբերութեամբ չէին տանում ազնուականների բռնութիւններն ու անիրաւութիւնները. ամբոխը յուզւում էր, ժողովրդական խրոսովութիւնները աւելի յաճախ էին կրկնւում: Ոչ մի խստութիւն այլ ևս չէր կարող լռեցնել զարթած ինքնաճանաչութեան արդար պահանջները: Այդ լաւ ըմբռնեց Ալէքսանդր II-րդը, Ռուսաստանի այդ մեծ վերանորոգիչը: «Գոյութիւն ունեցող չնչատիրական կարգը,—ասաց նա Մոսկուայի ազնուականներին դեռ 1856 թուին,—չէ կարող անփոփոխ մնալ: Աւելի լաւ է ճորտական իրաւունքի վերացումը կատարել վերելից, քան սպասել, որ այդ իրաւունքը ինքն իրան սկսուի վերացուել ներքեւից»: Եւ չը նայած, որ ազնուականութեան մեծամաս-

նութիւնը՝ դարերի ընթացքում սովորած լինելով ժողովրդի ձրի աշխատանքով ապրել, ընդդիմանում էր այդ վերանորոգութեան՝ այնու ամենայնիւ մտաւորականութիւնը, արտուրւխտական գաղափարը, յաղթող հանգիսացաւ:

Երբէք չի մոռացուի անշուշտ Ալէքսանդր II-րդի անհատական մեծ դերը այդ անարիւն յեղափոխութեան մէջ: Յայտնի է, որ նոյն իսկ Պետական Խորհրդում անդամների մեծամասնութեան հակառակ, որոնք աշխատում էին պահպանել ճորտութիւնը, կայսրը ընդունեց փոքրամասնութեան — ազատութեան կողմնակիցների — կողմը, և 1861 թուի փետրուարի 19-ին իր ստորագրութեամբ դրոշմեց իր անփոփոխելի կամքը — ազատել դարևոր ճորտութիւնից մի բազմամիլիոն աշխատաւոր ժողովուրդ: Այդ հզօր կամքով շղթաները ջախջախուել, ընկել էին, և ցնծում էր ազատ ծփող ուկրաինոսի նման ռուս ժողովուրդը, միլիոնաւոր ձայների միացած հառաչքով օրհնելով իր ազատարար մեծ թագաւորին: Այդ օրից Ռուսաստանի համար սկսւում է մի նոր դարագլուխ և հիմնովին վերանորոգւում է նրա պետական ու հասարակական կեանքը:

Պարզ է, որ եթէ Ալէքսանդր II-րդ համակարծիք լինէր մեծամասնութեան հետ, նոյն իսկ մասամբ, և ճորտերին ազատութիւն տար առանց հողաբաժինների, բոլորովին այլ կազմ կը ստանար Ռուսաստանի ներքին կեանքը, և գուցէ մենք ունենայինք աղնուական կալուածատէրեր, նման Իրլանդիայի լէնդլօրդերին, և հողագուրկ մի ժողովուրդ, որ ստիպուած կը լինէր այդ կալուածատէրերից կապալով հող վերցնել ու մշակել: Այդ դէպքում թէև գիւղացու անձը ազատ կը լինէր «ազնուական» պարոնների կամայականութիւնից, բայց իրապէս նրանք դարձեալ ճորտ պէտք է դառնային իրանց նախկին տէրերի ձեռքում, որովհետև իրանց ապրուստը ամբողջապէս կախուած կը լինէր այն կտոր հողից, որ կը բարեհաճէր բարձր կապալով տալ նրան կալուածատէրը: Սակայն ճորտերի ազատարարը չուղեց, որ ազատութիւնը անուանական լինի — նա ազատուած գիւղացուն դարձրեց և մի կտոր հողի լրակատար սեփականատէր:

Սկզբում աղնուականների և գիւղացիների փոխադարձ համաձայնութեան էր թողած հողաբաժինների յետ գնման հարցը, բայց յետոյ պարտադիր դարձրուեց հողաբաժինների յետ գնումը, և կառավարութիւնը յանձն առաւ այդ գործում օգնել գիւղացիներին. նա վճարեց գիւղացիների պարտքը աղնուականներին, և գիւղացիներին գիւրութիւն տուաւ 49 տարուայ ընթացքում կամաց-կամաց լրացնել փոխարէնը գանձարանին:

Գիւղացին այժմ գործ ունէր կառավարութեան հետ և ոչ մասնաւոր անհատների, որոնք անձնական շահերից դրդուած կարող էին նեղացնել նրան: Որպէս զի այդ հողաբաժինները յետոյ շանցնեն մասնաւոր անձանց ձեռքը, Ալէքսանդր III-ը օրէնքով (1893 թուին) նոյն իսկ արգելեց գիւղացիների հողաբաժինների վաճառումը գիւղական հասարակութիւնից դուրս անդամներին: Այդպիսով Ռուսաստանի թէ՛ կալուածատիրական, թէ՛ պետական և թէ՛ արքայազնական (УДѢЛЬНЫЙ) հողերի վրայ ապրող գիւղացիները հնարաւորութիւն ստացան մանր սեփականատէր երկրագործների մի դասակարգ կազմել:

Այստեղ չէ կարելի ցաւելով չը նկատել, որ Անդըրկովկասում կալուածատիրական հողերի վրայ ապրող գիւղացիները դեռ ևս մնում են տնտեսապէս կախուած «մուրքազար» բէգերից, աղաներից և խաներից: Այդ գիւղացիները բացի արքունական հարկերից պարտաւոր են վճարել իրանց արիւն-քրտինքով վաստակած հողային բերքերի 30 մասից 4-ը կալուածատէրերին. ուրեմն կալուածատէրերը ստանում են գիւղացիներից 12<sup>0</sup>/<sub>0</sub>-ից աւելի, որ մի վաշխառուական տոկոս է կազմում: Այդ դրութիւնը հակասում է տիրող ընդհանուր կարգերին, և յոյս կայ, որ միայն ժամանակի խնդիր է նրա վերացումը, ինչպէս ժամանակի հարց էր չնչահարկը, որ վերացուեց այս տարուանից: Եթէ մեր բէգերը ախորժակներ ունեն ձրիաբար վայելել գիւղացու աշխատանքը, պէտք է իմանան, որ մի ժամանակ ճորտութեան ազատութիւնից առաջ պակաս ախորժակներ չունէին և ողւս ազնուականները: Օրէնքը թողնում է մեր կալուածատէր ազնուականների կամքին՝ կամաւոր համաձայնութեամբ ծախել գիւղացիներին նրանց հողաբաժինները, բայց «կամաւոր» անշուշտ այն չէ, ինչ որ պարտադիր պահանջը, ուստի իրանց շահերից բէգերը չեն հրաժարուել, մինչև որ օրէնքով ստիպուած չը լինեն այդպէս անել:

Մենք առիթ ենք ունեցել մի այլ տեղ (սուել\*) մանր գիւղատնտեսութիւնների գիւղացկոնութեան մասին գոյութեան կուում. սակայն այդ «մանրութիւնը» որոշ չափ ունի, որից նուազագոյնը արդէն անկարող է վարձատրել երկրագործի աշխատանքը: Այդ յօդուածներում ցոյց էր տրուած և սակաւահողութեան չափը մեր երկրում: Եթէ Ռուսաստանում 3—5 դեսեատին չնչաբաժին հողը համարւում է, և իրաւամբ, անբաւարար, ինչ աւել 0,7—0,9 դեսեատին բաժինների մասին, որ ընկնում է, օրինակ, Երևանի և Կարսի կողմերի գիւղացիներին:

\*) Մշակ, 1900, № № 29, 39.

Անկասկած այդպիսի փշրանքների վրայ ոչ մի տնտեսութիւն չէ կարող արդիւնաւոր լինել:

Սակաւահողութեան առաջն առնելու համար բուն Ռուսաստանում գործադրուում են մի քանի միջոցներ. աւելորդ ազգաբնակչութիւնը գաղթում է Սիբիրի ընդարձակ վայրերը, այսպէս, Սիբիրի երկաթուղու գծի երկու կողմում իւրաքանչիւր տարի մօտ 200,000 հոգի բնակութեան նոր տեղ է հաստատում: Բացի գաղթականութիւնից, որ թոյլ չէ տալիս մայր գիւղում անչափ բաժան-բաժան անելով մանրացնել հազարաթիւնները, նաև Շինական Բանկը գնում է մասնաւոր անձերից հողեր և ձեռնտու պայմաններով, երկարժամանակեայ վարկով, տալիս է գիւղացիներին: Կալուածատէրերը, չունենալով այլ ևս ձեռքի տակ առաջուայ պէս ձրի աշխատողներ, շատ դէպքերում աւելի լաւ են համարում ծախել իրանց հողերը կամ կապալով տալ հարեան գիւղացիներին: Վերջապէս, տեղային ինքնավարութիւնը, զեմստօն, մի հրաշալի հիմնարկութիւն է, որի գործիչները միշտ կարող են գիտակցօրէն այս կամ այն օգնութիւնը հասցնել գիւղացի երկրագործներին, հրաւիրելով, օրինակ, մասնագէտ ագրօնօմիներ, որոնք իրանց խորհուրդներով կարող են միջնորդ լինել ագրօնօմիական գիտութեան և գիւղացիների մէջ: Զեմստօն կարող է ընտիր սերմացուների շտեմարաններ բանալ, կազմակերպել գիւղատնտեսական գործիչներ մատակարարելու խնդիրը, փոխատու-խնայողական գանձարաններ հիմնել, օգնել ընկերակցութիւններ կազմակերպելու գործում և այլն:

Այդ մի շարք նպաստաւոր պայմաններից, դժբախտաբար, զուրկ է մեր գիւղացին: Ի հարկէ, ոչ մի մասնաւոր նախաձեռնութիւն չէ կարող զեմստօնի տեղը բռնել, բայց և այնպէս մեղ թւում է, որ եթէ Կովկասի Կայսերակ, Գիւղատնտեսական Ընկերութիւնը աւելի կենդանի և գործնական հետաքրքրութիւն ցոյց տար դէպի մեր գիւղական կեանքը և մեր իրականութեան աւելի մօտ կանգնէր—կարող էր, յայտնի չափով, կատարել զեմստօնի դերը. սակայն նա մինչև այժմ աւելի ակադէմիական, տեսական հարցերով է զբաղւում, քան զուտ գործնական, ուստի մեր գիւղացին քիչ օգնութիւն է տեսնում նրանից: Կարելի է ասել՝ չարիքի ովկիանոսը այդ Ընկերութիւնը մինչև այժմ ուղւում էր կփերով ցամաքեցնել...

Ճորտերի աղատութեան քառասնամեայ տարեդարձը մեզ առիթ տուեց խօսելու և մեր գիւղացիների մասին, և իսկապէս, էլ ո՞ր օրում այնքան յարմար է լինել այն բազմամիլիօն աշխատաւորներին, որոնք երկրագործական մի ահագին պետութեան

ստուար մեծամասնութիւնն են կազմում: Այդ մասնայի մասին նոյն այդ օրը յիշեցին Ռուսաստանի ամեն անկիւններում. քաղաքային և գաւառական ինքնավարութիւններից ամեն մէկը մտածեց մի կերպ յաւելրժացնել այդ օրը ժողովրդի առաջադիմութեան նպատող որ և է ձեռնարկութիւնով: Մոսկուայի քաղաքային խորհրդարանը, օրինակ, մտածում է բանալ 12 նոր քաղաքային դպրոցներ, Պետերբուրգի խորհրդարանը որոշեց 50 հազար ռ. յատկացնել ժողովրդական մի ուսումնարանի և գրադարան-ընթերցարանի. մի տեղ ժողովրդական թատրոն են հիմնում, մի այլ տեղ ժողովրդական տուն և այլն. իսկ Սարատովի և Նիժնի-Նովգորոդի խորհրդարանները նորից բարձրացնում են մի հարց, որ բազմիցս յարուցել են թէ առաջադէմ մամուլը, թէ գէտնավոնները և թէ բժշկական ընկերութիւնները, միջնորդելով, որ վերացնուի մարմնական պատիժը, մարդկային պատիւը վերաւորող այդ խայտառակ գործողութիւնը: Եւ իսկպէս՝ ճորտերի ազատութիւնից յետոյ մնացած այդ ժառանգութիւնը մի քսամունքի թիւրիմացութիւն է, ուստի զարմանալի չի լինի տեսնել մի օր իրագործուած և վերոյիշեալ բարի տեսչանքները:

Ճորտերի ազատութիւնը, հիմնովին վերանորոգելով Ռուսաստանի կեանքը, անփոփոխ չը թողեց ոչ միայն վարչութեան, դատարանի և տեղական ինքնավարութեան կազմակերպութիւնը, այլ և վաթսուներկան թուականներում շատ զգալի կերպով ընդարձակեց մամուլի օրէնքները և դեմօլրատիկական գոյն տուաւ կրթութեան գործին:

Լ. Ս.

#### ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

«Правительственный Вѣстникъ»-ում տպուած է հետեւեալ. Դեռ անցեալ տարուայ յունիս ամսին մի քանի բարձրագոյն զբոսայրոցների ուսանողների գաղտնի կազմակերպութիւններ Օդէսայում «համառուանողական ժողով» էին գումարել, որին մասնակցել էին պատգամաւորներ այդ կազմակերպութիւններից «ամբողջ ռուս ուսանողութեան» գործողութիւնների համար միակերպ ծրագիր մշակելու նպատակով: Նիստերից մէկի ժամանակ ոստիկանութիւնը ձերբակալեց «պատգամաւորներին» և խից նրանց ձեռքից մօտները գտնուած թղթերը: Այդ թղթերը պարունակում էին, ի միջի այլոց, տեղեկութիւններ արգելուած ուսանողական ընկերութիւնների կազմակերպութեան, նրանց քանակական կազմի և նրանց ընտրած նպատակների մասին, և բացի այդ, նրանց ապագայ գործունէութեան ծրագիրները և նախա-